ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/50

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/17» ծածկագրով բաց մրցույթ, կոստյումների և բաջկոների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԲՄԱՊՁԲ-7/17-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2913-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/896-2021 գրության հիման վրա, 01.03.2021թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 01.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 01.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/50 համարի ծածկագիրը:

10.03.2021թ.-ին և 12.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.03.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/896-2021 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է 19.03.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագիրը /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարիի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/17-2 պայմանագիրը՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.02.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Պահապան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2913-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 10.03.2021թ.-ի թիվ Պ-017 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՅ-ԼՕ-2021/50 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Պաշտպանության նախարարության և <<Պահապան>> ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքվել է N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագիրը: Պայմանագրի 2018 և 2019թթ. համաձայնագրերով նախատեսված պայմանագրային պարտավորությունները <<Պահապան>> ՍՊԸ-ն ըստ ժամանակացույցի պատշաճ կերպով և ժամկետներում կատարել է: 31.03.2020թ. կնքվել է հիշյալ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 3 Համաձայնագիրը: Ըստ Համաձայնագրի գնման ժամանակացույցի, <<Պահապան>> ՍՊԸ-ն պարտավորվել է արտադրելու և ՀՀ ՊՆ-ին մատակարարելու 500 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբոդյա ամենօրյա>>, (որից 250 լրակազմը 2020թ. 2-րդ եռամսյակում, 250 լրակազմը՝ 2020թ. 3-րդ եռամսյակում) և 57 լրակազմ <<Կոստյում

ավտոտեսուչների համար>> (57 լրակազմն էլ՝ 2020թ. 3-րդ եռամսյակում) ապրանքատեսակները:

Համաձայնագրի գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում արտադրվել և ՀՀ ՊՆ-ին է մատակարարվել 57 լրակազմ <<Կոստյում ավտոտեսուչների համար>> և 180 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա >> ապրանքատեսակները:

ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից Համաձայնագիրը 21.01.2021թ. միակողմանի մասնակի լուծվել է:

Լուծման հիմք է հանդիսացել Համաձայնագրով նախատեսված ևս 320 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա >> ապրանքատեսակի մատակարարված չլինելը: Համաձայնագրի միակողմանի լուծման հիմքերը ՊՆ ՆՏԱԴ-ը ուղարկել է ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ Հայցվորին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար: ՀՀ Գնումների հետ կապված Բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի 11.02.2021թ. N ՍՑ-ՆԳ-2021/31 որոշմամբ ընթացակարգը մերժվել է և <<Պահապան>> ՍՊԸ-ն չի ներառվել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Որպես ընթացակարգի մերժման հիմք Բողոքներ քննող անձը ընդունել է այն հանգամանքը, որ ոչ օրենսդրությամբ, ոչ էլ հիշյալ պայմանագրով Համաձայնագրի միակողմանի մասնակի լուծում նախատեսված չէ: Հիշյալ որոշման հիման վրա ՊՆ ՆՏԱԴ-ը 22.02.2021թ. N ՆՏԱ/614 գրությամբ հայտնել է, որ միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ <<Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով>>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նշված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավարությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է սահմանել պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ փվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով և պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը: (Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.04.2009թ. N ԵՔԴ/0595/04/08, 27.11.2015թ. N ԵԷԴ/0888/02/14 քաղ. գործերով որոշումները):

<<Պահապան>> ՍՊԸ-ի և ՊՆ ՆՏԱԴ-ի միջև 19.03 2018 թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/17-2 պայմանագրի 7-րդ կետը սահմանում է՝ <<Պայմանգրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել.....>>:

Համաձայնագրով նախատեսված 320 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա >> ապրանքատեսակի չմատակարարելու հարցում բացակայում է <<Պահապան>> ՍՊԸ-ի մեղքը, քանի որ համաձայնագիրը կնքվել է 2020թ. մարտի 31-ին, այսինքն այն ժամանակ, երբ ՀՀ-ում և ամբողջ աշխարհում լայնորեն տարածվել էր կորոնավիրուսի համաճարակը, իսկ սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը ընկած ամբողջ ընթացքում՝ նաև պատերազմական իրավիճակը, որոնք հանդիսանում են անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր):

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. <<Հայաստանի Հանրապետությունում

արտակարգ դրություն հայտարարելու մասին>> թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

2020թ. մարտ ամսից մինչև օրս <<Պահապան>>ՍՊԸ-ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով, բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1 աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

ՀՀ Պարետի 27.03.2020թ. <<Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ>> N 19 որոշման հիման վրա մինչև 2020թ. մայիսի 14-ը <<Պահապան>> ՍՊԸ-ն ամբողջովին դադարեցրել է արտադրական գործունեությունը, որի պատճառով առաջացել է ինչպես հիշյալ պայմանագրի N 3 Համաձայնագրով, այնպես էլ տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված ապրանքատեսակների արտադրման և մատակարարման կուտակումներ: Այդ մասին ՊՆ ՆՏԱԴ-ը բազմիցս բանավոր իրազեկվել է:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք <<Պահապան>> ՍՊԸ-ի կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան Բելոռուս, Թուրքիա և այլն:) Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները, որը առավել խստացվեց Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ողջ ընթացքում և հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Դեկտեմբեր ամսվա սկզբներին է միայն <<Պահապան>> ՍՊԸ-ին հաջողվել մեծ դժվարություններով Հայաստան ներկրել հիշյալ համաձայնագրով նախատեսված 320 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա >> ապրանքատեսակի արտադրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը և աքսեսուարները (աստառ, շղթաներ, սինտիպոն, անջրաթափանց կտոր, ռետինե մանժետներ, կաշվե գրպանիկներ և այլն:)

Դրանց ստացման վերաբերյալ փաստաթղթերը կցվում են: Փաստաթուղթ չունեցող ապրանքատեսակները գնվել են ներքին շուկայից:

2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը, կապված Ադրբեջանի կողմից ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ սանձազերծած պատերազմի հետ, <<Պահապան>> ՍՊԸ-ի-ն ամբողջովին դադարեցրել է պայմանագրային պարտավորությունների կատարումը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի 06.10.2020թ. N ՆՏԱ/4804 գրության հիման վրա ամբողջովին կատարելով միայն ՊՆ-ի պատվերները, արտադրելով և բանակին մատակարարելով միմիայն <<Կոստյում բամբակյա կեպիով և/ կամ <<Կոստյում ձմեռային դաշտային >> ապրանքատեսակները, ինչպես նաև արտադրել և բանակին է մատակարարել քնապարկեր, թիկնոցներ, ներքնակներ և անհրաժեշտ այլ պարագաներ, ընդ որում դրանց մի մասը բարեգործական հիմունքներով:

Բացի նշված պայմանագիրը, <<Պահապան>> ՍՊԸ-ն կնքված տասնյակ այլ պայմանագրեր ունի ինչպես ՊՆ ՆՏԱԴ-ի, այնպես էլ այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային իրավիճակի պատճառով այդ պայմանգրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչընդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

Այդ մասին համապատասխան հիմնավորումներով <<Պահապան>> ՍՊԸ-ն 18.12.2020թ. N Մ-010 գրությամբ հայտնել է Պատասխանողին, խնդրելով 320 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա>> ապրանքատեսակի արտադրումը և մատակարարումը փոխանցել հաջորդ տարվան, պատրաստակամություն հայտնելով ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ, կամ երկկողմանի մասնակի լուծելու Համաձայնագրի՝ հիշյալ չմատակարարված 320 լրակազմ <<Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա ամենօրյա >> ապրանքատեսակի վերաբերյալ մասը: Հիշյալ գրության վերաբերյալ Պատասխանողը որևէ դիրքորոշում չի հայտնել և միայն 22.01.2021թ. գրությամբ հայտնել է Համաձայնագիրը, իսկ 22.02.2021թ. գրությամբ՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծված լինելու վերաբերյալ:

Վերը հիշատակված հիմնավորումներով <<Պահապան>> ՍՊԸ-ն 03.03.2021թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, խնդրելով հիշյալ պայմանագիրը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից 19.02.2021թ. միակողմանի մասնակի լուծելը և ըստ հետևանքի տույժերի և տուժանքների վերաբերյալ ներկայացրած պահանջը անվավեր ճանաչելու մասին (քաղաքացիական գործ N ԵԴ/8266/02/21):

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով <<Պահապան>> ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, խնդրում ենք <<Պահապան>> ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:»:

10.03.2021թ.-ին ներկայացված Պ-019 գրությամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին է ներկայացրել աշխատակիցների կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ փաստաթղթերը:

4. <u>ՍՑ-LO-2021/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/17-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետներում:

iv. Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 31.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/17-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի 2020 թվականին՝ 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.02.2021թ.-ին հրապարակված

պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/614 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված N «ԲՄԱՊՁԲ-7/17-2» գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Մասնակիցը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 500 լրակազմ «կիտել և կիսաշրջազգեստ կիսաբրդյա, ամենօրյա» ապրանքատեսակը, որից 320 լրակազմ չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակի մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N «ԲՄԱՊՁԲ-7/17-2» գնման պայմանագիրը վերը նշված ապրանքատեսակի մասով՝ հիմք ընդունելով N «ԲՄԱՊՁԲ-7/17-2» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել են մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2913-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրացուցային օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ

նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ.-ին կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ–7/17-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքված Համաձայնագրով սահմանված ժամկետներում: Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 31.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ–7/17-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը, որի թիվ 1

հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020 թվականին՝ 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում:

Թիվ 3 Համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 500 լրակազմ «կիտել և կիսաշրջազգեստ կիսաբրդյա, ամենօրյա» ապրանքատեսակը, որից 320 լրակազմ չի մատակարարել: ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակի մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N «ԲՄԱՊՁԲ-7/17-2» գնման պայմանագիրը վերը նշված ապրանքատեսակի մասով՝ հիմք ընդունելով N «ԲՄԱՊՁԲ-7/17-2» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.02.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/614 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին և դրան կցված բուժ հաստատությունների կողմից տրված տեղեկություններին ու աշխատակիցների կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ ներկայացված փաստաթղթերին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքը չմատակարարելը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, և երկրում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի

Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Բողոքներ քննող անձը վերոնշյալները քննարկելով նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը սահմանվում է պետության ամբողջ տարածքում կամ առանձին հատվածներում ներքին և արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև երկրի սահմանադրական ու հասարակական կարգը պահպանելու նպատակով (հոդված 1): Արտակարգ դրության ռեժիմն ենթադրում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ազատությունների և իրավունքների սահմանափակում, ինչպես նաև նրանց համար լրացուցիչ պարտականությունների սահմանում (հոդված 4):

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն և ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» որոշումները, փաստում է, որ ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակն օբյեկտիվորեն կարող էր ազդել Մասնակցի ստանձնած պարտավորությունների կատարման վրա, քանի որ, ինչպես վերը նշվեց, **անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը (համաձայնագիրը) կնքելուց հետո**, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը

և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության և կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի հանգամանքներով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2913-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/50 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**